ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«10» հունվարի 2020թ. №2/21-Ն

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԿ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 102/2019 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու, աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող Հայկ Կամոյի Այվազյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Recoverable Signature

X

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ